

ՀԱՆԴԵՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՐԴԱՏ

ՔԵՐԹՈՒԱԾ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

ՏԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ԶԵԿՈՒՅՑ ՑՈՒՄՆԵՐ

Յերկասիրութեանսյայսմիկ՝ առաջնորդ իւր կալեալ է հեղինակն զԱրաթանգեղոս, և ըստ վիպացն է յարմարեալ զնօսս, ի լեզու տաղաջափական ի պէսպէս անդամ տողից, և ի յանգս աւարտեալ զնոյն, ըստ հւանեալ կարդի: Յարարուած և. Ազօթք Գրիգորի. նախանձ Պալատականաց ընդ Գրիգորի. Ամենաբանութիւն. Գովկաս, և Պաշտօնափրութիւն Տրդատայ. Հրաւէր Գրիգորի ի զոհ. Մերժումն նորա. Տանջանք նորին բազմադրի. Ամբաստանութիւն, և Վշիս ի բանտարդելութիւն. Յորդոր զգրականին ի մարտ. յժբ. Տեսարանս:

Յարարուած Բ. Խօսք Ամբատայ. Կոտորած Հորիսիմանց. Մոլեգնութիւն Տրդատայ. Սարափ Պալատականաց յերեսաց նորին. Զքսանք որսոց. Շրջումն Տրդատայ յանբանից կերպարան. Ողբք. Յայանութիւն Խոսրովիդիստայ. Աշտառութիւն Գրիգորի. Զիջ Պալատականաց. Երժ Գրիգորի ի կեսարիա. յժբ. Տեսարանս:

Յարարուած Գ. Խորհուրդ. Պատերազմ և Պարտութիւն Գրմաց. Ապաշխարութիւն Տրդատայ. Աղեր Զարեհի. Արագածումն Գրմաց յերեսաց Տրդատայ. Դարձ Գրիգորի ի Հայաստան, և Հերցնկալութիւն նորին. Կործանումն բագնաց. Քարոզութիւն Գրիգորի. Անհճք Զարեհի. Յետին կացուրդք. յժբ Տեսարանս:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՉԻ ԹԱՏԵՐ

ՏՐԴԱՏ. Արքայ Հայաստանեայց.

ԳՐԻԳՈՐ, Պաշտօնեայ Արքայի և Լուսաւորիչ.

ՍՄԲԱՏ. Սպարապետ Տէր Բագրատունեաց.

ԱՐՏԱՒՐՁԴ, Խորհրդական Արքայի և Պաշտօնեայ պատերազմի.

ՏԱԶԱՏ. Պալատական իշխան Աշոցաց.

ՕՏԱՅ, Նախարար Գործակալ Արքունեաց.

ՎԱՀՐԱՄԱ, Նահապետ Անդեղ տան.

ԲԱԲԵԿԻՆ, Զօրավար և Տէր Ամատունեաց.

ՇԱԽԱԲԵ, Դահնապետ իշխան Հաշտենից.

ԶԱՐԵՆ, Գրմապետ Աւագ.

ԱՐՄԱՅԻՍ, Որդի Գրմապետին.

ԱՐՄԱՅԻՆ, Օքնական Զարեհի.

Ա. Բ Ա. Ր ՈՒ Ս. Ծ Ա.

Ցեսարանն է յԵկեղեաց Գաւառ յԵրիզու Աւանի, բա հովակառ մենենաւն Անահտայ, թիրակ մի, և ոստորոտով նորա գիտ :

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Գրիգոր

Որ էն յայեր յանպարագիր աթոռ բազմեալ համիշխան, կեղուաւս որպէս փողաբարբառ կարդամ ըզփառս քում անուան .
Ի՞ր յամեցայց գանդաղեղով յօրհներգութիւնս բերկրաբար
Զի սիրագրաւ հողածընաց մըտերմութեան անձկացար,
Ընդ հեզ հոյուաւ նոր հօտ խաշանց ի սուրբ փարախ տաւաղին .
Դու զայն ստացար, Որդի Միածին, գընովդ արեան 'ի խաչին,
Որով ըզբեզ ծանեան Աստուած, առ քեզ գիմեն համերամ
Մըշտամըուունչ ըզբեզ օրհնել յաւուրց յաւուրա եօթն անդամ:
Բայց զի պընդեալք յարատեեն բազումք ի դից պաշտաման,
Զածեն ի յուշ ըզսասս ահեղ, և ըզսէր քո անսահման .
Ո՛վ ապերախս այն բարոյից, ով ապլստամք այն կամաց
Որ թօթափեալ ըզսիրոյն կապ՝ զըսպառնալիս հրաւիրեաց :
Յայս մոլորեալ զոհ պըզծութեան թորգոմնայ տուն անըզգայ՝
Կանդնեաց բագին մամնային պաշտել ըզբեզ Անահտայ .
Ի տար յիւրմէ տարագըրեալ սուրբ զԱռաքեալս այցելու
Ազգն անօրէն յորոյ ձեռին փայլէ սուսեր մահացու .
Ո՞ւզ զարտուղի, Արարիշդ իմ, յու գընայի ես թափառ,
Եթէ ոչ քոյց գըլնոց լիներ հովանի աջ բարերար .
Արդ զայն զոր կրեմ, մի կաճառ չար յինէն բարձցէ մոլեգին,
Զարփիակամթդ ասեմ շընորհ՝ զոր կաթեցեր անդըսոին :
Այլ որդի գոմ ծածկեալ ի գաղտ հօրս Անակայ չարաբաստ,
Անկ է նորին պատուհասին արժանապէս կալ պատրաստ,
Բարձեալ մնոտի յանձնէս երկիւլ՝ յօժարակամ ընտրեցի
Ըսպասարկու յարքունիս գոլ ի պալատան արքայի :
Վասն թիսուսի թէ կեանք թէ մահ, հանգունատիպ ի ճահ է,
Զի յաշխարհին որ զալցն է անձն իմ ի փառս հանգիցէ .
Ընդ սոյն աղերսս, Ամենակալ, հաշտ ակամք քով հաճեսջիր,
Առաջնորդեալ աջողութեամք կոխել յաստեղս լուսափիո :

Հրեշտակ

ի քո տոկուն արիութեան
կանանչացի արտ բանական .
Փառաւորեալ Տէր Սաբառվդ-
Բգրեղ ինքեան առնէ հաղորդ : (Երբայ) .

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏԱՅԱՏ, ԱՐՏԱՒՐՈՎԴԻ

Տաձատ

Զայրոյթ արդար , և բարեկամ , անձկաւ մեծաւ
Կիզեալ զաղիս տոչորէ զիս տակաւ տակաւ .
Չե իմ հասեալ յաւարտ փառաց ճակատազրի՝
Դէպք անհամբոյր հանդիպեցան անդ առ եղի :
Որպէս մըրրիկ ձըգէ ուժգին յերկիր կործան
Ըզտունկ դալար , զարտ աւերեալ և զանդաստան ,
Սապէս վարանք և ծուփք սըրտի գան անմեկին ,
Մինչ ոչ հոդիս կայ յանդորրու , և ոչ մարմին :
Եթէ լինէր քեզ ի սիրտ իմ ընդմըտանել
Եւ տածող կրից տեղեկանալ զըժոխըմքեր ,
Անձըն քոյին հալեալ մաշիւր ի տոչորման
Ժամանէիր ի վաղահաս կենաց վախճան :
Երդնում ի Դիս պաշտպանս երկրի , Երդնում յԱլեղ ,
Ընդ ճակատու գիրն անվեհեր եկից ի վէգ ,
Թէ ոչ արագ ձայնիս լիցի նա ընկալու՝
Յարեան իմում սուրբս լիցի արդ թաթաւուչ :

Արտաշազդ

Օրէնք են բարեաց , սիրելիդ Տաճատ ,
Մի մըխիլ ի դործ յուղեալ ի կրից հուր ,
Այլ վրէժ ի կըշիւր արկջիր որոգայիթ
Զառիթ վընասուդ կոխել առաթուր :

Տաճատ

Զիք իմ ոխերիմ անձին թըշնամի
Որ սըով դաւեսցէ ըզկեանս իմ դալար .
Այլ խոշնդուն է փառացս հայրենի
Հասեալ ի պատիւ առ մեզ ոմն օտար :

Նախատինք են այդ տոհմի Հայկազնեայց՝
Զարածրնունդ զոք տեսանել հանդէպ .
Յաղթոնի պաշտ կամք յար յամօթլեած .
Պըճնեալ ըզգեստուք՝ յոխորտայ ըստէպ :

Արտաշազդ

Եւ ու այն ըստամբակ ճոխացեալ ի պատուի ,
Վաղ ընդ փոյթ կոծ առցէ ընդ կորուստ ողբալի .
Զօրավիզն եղէց սրով մատնել զայն սուսերի .
Մի ևս նա յաւեցէ զոդ չընչել կենդանի :

Տաձատ

Վատանուն այն գրիգոր գընացիւք խարերայ
Սիրելի է յոյժ յաշս Արքային Տըրդատայ .
Որում է յանձն եղեալ արքունի մեծ Պալատ
Զայնպիսին հարկ է ինձ արկանել յորոգայթ :
Գոռողին Անակայ է ծընունդ ժանտաժուտ .
Այնըմ չէ տակաւին ոք ուրեք խելամուտ .
Ինձն չեմ ձեռընհաս յայտնել զայդ յատենի ,
Քաջ լեր դու , Արտաւազդ , փոյթ պատմել Արքայի :

Արտաշազդ

Օ՞ն և օն , վրէժխընդիր յարիցեն Դիք արդար
Զըրաւել ի կենաց Անակայ զաւակ չար .
ԸզՏըրդատ իրազեկ արարից փոյթ ընդ փոյթ
Վաղ ուրեմն ըզսէր իւր փոխեսցէ ընդ զայրոյթ :

Տաձատ

Քաջ է ի դէպ աւուրս մեծի յիշատակ
Զի յերիզա Դից զոհեսցի զըւարակ .
Գումարեսցի անդ Հայաստան ի մի վայր ,
Նախարարաք զԱզգին պաշտել Խնամատար : (Երբան)

ՏԵ՛ՍԱՐԱՆ Գ.

ՏՐԴԱՏ. ԶԱՐԵՀ. ՍՄԲԱՏ

Տրդատ (ի մէջ երկուց բիկնապահաց) :

Ինձ արքայիս քաջածընունդ բազմավլտանգն յասպարէզ
 Դիք Դիցանցչք յԱզատ Մասեաց թիկունս ետուն մեծապէս ,
 Զի ախոյեանք ահեղազօր անկան ի դաշտ Արիսեան
 Եւ երիվարք սալասըմբակք տապալեցան անդարման .
 Մի պարծեսցի ունայնապանձ տիրապետել ինքնիշխան
 Որ Խոսրովայն կեանըս գաւեաց ի լայնատարր Հայաստան .
 Ոչ ակն ածէ ապատոհմիկն յիմոյ թագէ Պարթեեան ,
 Մինչ տիրանամ մեր պատուարաց բազմեալ ի գահ անսասան :
 Այլ վրէժխնդիր ցըշունչ վերջին ճիգըն թափեմ անխընայ
 Զար զայդ վերադ ջընջել յերկրէ և հալածել բացօթեայ .
 Սաստիկ հըզօր է այս Տըրդատ , չիք քան ըզնա գերազանց ,
 Համանըման սնմահացուաց որբ յՈլիմպոս սիգապանծ :

Ահա հուր բոցավառ
 Երբ յառնեմ դիցափառ
 Զառաջեաւս ընթանայ
 Կլանել զիմ հակակայ :

Քաջաց քաջաց անդ գումարտակք խոնարհեցան գետնամած ,
 Գեր քան զչումնուլ հըսկայագդոյն գրտող եզէ պերճութեանց .
 Իսկ ի վերուատ շանթընկէց հայրն Անմահից և մահացուաց
 Երդուաւ ի շուք յաւերժութեանն հաստել զիս պետ մըշտակաց ,
 Ծափս հարէք , Ակրանազեանք , յօր տարեկան հանդիսի ,
 Յամ դեռաբոյս զիս ձեզ ձօնեաց և զօրացոյց ի մարտի .
 Լուսածըդի արդ օրիորդք պահակերեն յԵրիզա
 Զի ըղձանան խաղաղութեան արքայութեանս Տըրդատայ ,
 Հապա Անմահք են բարերազք և պարիսպ մեր հայրենեաց .
 Արամազնեայք , մի մոռանայք պաշտօն հարուլ վեհազանց .
 Արեգ կարմիր բա մարդասէք զերկրի ձօնէ շաղ և շող
 Լուսին Տիկին եկաւորի յերկիրըս մեր փափկահող :
 Ի խաղմ դաշտի վահագն արի մեզ քաջութեան կարապետ
 Յաղթահարեալ ըզթըշնամին ի չու զընէ ահափետ .
 Զնը օրհնութիւն քեզ մատուացուք ոսկեվարսեան գիսանէ ,
 Եւ ձեզ հարսանց սուրբ երամոյն ուրոյն ուրոյն յանուանէ :

Զարեն

Նոյն իւ ինքեւանք աստուածք յաստուածս խնամակալուք էակաց
Ծոց գողաւոր յերկրի՝ զերկինի զեղուն բարիս փոխադարձ ,
Ի սիրտ մարդկան գայ անդըստին ողորմ նոցին և գորով .
Յաւուրց յաւուրս զայխարհս հաստեն խաղաղութիւն յանխրսով :
Էից հանուր յոյսն ապիկար յանմահութիւն վերբերի
Եւ հողեղէն մարդըն լինի հաղորդ կենաց շնորհի .
Զանուն նոցա գարուց ի գարս բարեբանէ արարածն .
Ե՞ն բարեբարք , ազդի մարդկան առատարաշին և գըմած :
Մինչև ուրեմն մեծ Արքայիդ նազեն զհասակն ի կանգուն
Ի կերպարան իւրեանց փառաց շուրք մազդեզանց բարեմոյն .
Գամ քան ըզդամ ի թե բարդի փարեալ զգահիւ պերճանաց
Ի ծիր թագիդ համայն այնպէս շողայ մական դերապանծ :

Սմբատ

Քեւ Հայաստան հաս ըղձակախ յաւարտ փառաց պերճութեան .
Յարազըւարծ ի բերկրութեան հանդշին անձինք մեր , բարէ .
Հըսկայազօր իշխեցողիւ յայսըմ գահոյս հրաշազան
Ցորքան արեգ յերկինց կամար զիւրն ըղհըրատ լուցանէ :
Զեն ինչ զանխուլ յակաստանի յազդանակք քո բիւրաւոր
Զորըս տարար վլստանգալից ի դըժուարս իսկ միջամուխ .
Ընդ տես քոյին հըսկայք վիթխարք խուճապեցան անդանօր ,
Հանդիպեալ քոյին ցասմամք՝ տեղացիր շանթս հրաբուղիւ .
Ի սիգալ քո հարկապահանչք մի ապահարկ խընդայցեն .
Յամաքեսցին յորճանք ջըրոց , աւերեսցին թումքք գետոց ,
Կեւանք քո հանդէպ բրռնակալաց կայցէ պարիսպ ամրաշէն .
Մի պատեսցեն ամպք թըխպայորդք զաստըղ քոյին ոսկեզօծ : (Երբայ)

Զարեն

Ազնիւ նըւէրք տուրք աստուածոց առ ձեզ ելին ճոխաբար ,
Որք մեզ յերկինս յանհետ վախճան են օժանդակք բարեփառ .
Օ՞ն , գուք յաւէրք մըշտապաշտօն վերին խորանս յՈլիմպեան
Զարժանին տուք ձօն պատարագ վեհից դասուց յերախան :
Ի հուր կիզեալ ճենճեր ըզճարպ գնասցեն ի վեր խորանարդ ,
Անդ երկնաւորք հոտոտեսցին ի բոյր խընկոց բարդ ի բարդ .
Պաղատանզք լըւեալ ձայնի ձեր մաղթանաց ձօնակից
Պարգևեսցեն ըզլիութիւն երշանկութեան վայելից :

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՏՐԴԱՏ. ԶԱՐԵՀ, ԳՐԻԳՈՐ

ՏՐԴԱՏ

Քան զըզբօսանս լաւ ինձ Դից գոլ օրհնաբան :

ԶԱՐԵՀ

Աստէն, հանպա, ի մեծ ըսպաս սըրբութեան
 Հարուստ բաշխոյս ապաժումից ի հեղման՝
 Փոխսան բարեաց հաճոյական ընծայիւք,
 Արիք, զՈգիս յուխտ տարիանաց պաշտեսցուք :

ՏՐԴԱՏ

Յատեան փառաց աւագանւոյս, բարէ, քաւդեայդ, Դից բանրեր,
 Աերկեան յաւուր գաւաղանիս անմահական շուք հարեր .
 Բերկրեալ պարծիմնը լուիրական հանդիսութեանս հանդիսուեալ,
 Աստ ի զլնին տիեզերաց և աստեղաց փայլ ի փայլ .
 Տեսցեն երկինք ըզմերն ընծայ զանուշահոտ ըսպանդից,
 Ըզփոխադարձ սէր յեթերաց պարզեսցեն անթախիծ :
 Թառաջ հապա, մատի՛ր յառաջ, անսա վեհիս հրամանաց .
 Թառաջ, գրիգոր, դու մըտերիմն ես յորդիս իմ երկիւղած :
 Ի կաճառիս, օն անդր յառաջ ի պատարագ Արտեմենայ,
 Դրոշու դրօշու ի զլուխ անցեալ զօրավարաց Շիրակայ,
 Ի պար սպայից նախարարեան ի յոդներամ յօրինուած,
 Նորարովբոյ զոստըս ծառոց ընծայ մատո Ալիմապեանց :

ԳՐԻԳՈՐ

Բարեպատեհ քոց բանից դիւրահնար,
 Ալքայդ քաջազօր, եմ կամակատար .
 Այլ քաւ մերձենալ ի ծէս դըժուարին,
 Ի վեր բարձրանալ քան ըզչափ անձին .
 Միոյն միանոյ փառաբանութիւն,
 Առ որ յորդորէ բնութեան կենսատուն :

ՏՐԴԱՏ

Ոչ այլ արագ քեզ լրսիցեն որչափ Դիք են յեթերի .

Հլութեամբ քոյին օր ըստ օրէ նոյին գըտար փարեկի .
Բուրմանք զոհից բոսորաբուղն հայրենաւանդ հաւատոյ .
Իրաւ առնեն հաշտ զԱրամաղդ և զԱրտեմիս մեծ Դըշխոյ .

Զարեն

Քաւ քեզ, Գրիգոր , ըզմէ այդքան յուսարեկել տարադէպ .
Պատուէրը հրամանք Արքային մի ոգւոյդ լիցին երաշխէպ .
Քաջալերեաց . զու բընակից գոս բաղձալի և համբոյր .
Ես յօդն հասից , հեռի 'ի քէն տըկարութեան հըրապոյր :

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԶԱՐԵՀ . ԳՐԵԳՈՐ

Զարեն (Մուշտանելով զԳրիգոր ի մենեան) :

Ահա աստուած սիրոյն , կենաց սա աստուած .
Ահա ըզնա չտեսել երբեք ,
Միթէ այզչափ իցես զու հէք :
.Անկեալ երկիր պագ ի վերայ երեսաց .
Ինքն է ըսկիզբ ճարտարապետ աշխարհի .
Յաւիտենից Բանբիշ աղուոր
Տնօրէն զոյից մատամբն հըզօր .
Ցաշաց նորա ծածուկ սըրտիդ թաքչիցի :

Գրիգոր

Մոլորութիւն . . .

Քամ ինձ , Զարեհ , պաշտակ չարին՝ հետեիլ քեզ անտըրտունջ .
Զի ըստիպես ընդդէմ խըզնի պաշտօն հարուլ դիւաշունչ .
Զեն այնք աստուած , չեն և էակը պըճնեալ փառօք ինքնաբուն .
Հիբար հնարեալ արանց լինիս երկըրպագու վատանուն :

Եթէ աստուած
Են մեծապանծ .

Զիարդ արձանքն ոչ տեսանեն , աշկունս ունին ապաքէն .
Բերան ունին առ ի խօսել և ականջս , զի՞ ոչ լըսեն .
Զիարդ թաքչին յաշաց նոյին չարագործ հաղքը եղեռան ,
Երբ ինքնագոյ են արարի տիեզերաց ամենայն :
Ով աստուածոցըն զօրութեան . մի ընդ բանս իմ հապըշտապ
Զերկիր զերկին տապալեսցեն ամպրոպալից կայծակամբ :

Զարեն

Քանի ամօթ հարան յերեսս և նախատինք բիւրազգի .

Այս ըստամբակ՝ չափոյն անդէտ գողով անձին՝ զիս հեղնեաց ,
թէ պաշտօնեայ եմ սրբութեան , ուր են զից մեր երախտիք՝
Նոցին պաշտօն պատկառելի ինքեան գըծուծ համարեաց :
Ես ես սորին եղէց պատճառ բաղմագիմի անձկութեան .
Փոխանակ զի առ ոտն եհար ըզուրբ պատուէր պաշտաման :
Այլ քեզ ասեմ բան զայս խրատու , մի զայդպիսեաց քեզ խօսել .
Զիցնս զիտակ թէ աստուածք են իշխան մահու կենաց տէր :
Թէպէտ քեզ արդ ողորմ մահուն զդառըն բաժակ էր ըմպել
Այլ քաւ առնեմ ըզյանցուածովդ , այսուհետեւ ըզգոյշ լներ :

Գրիգոր

Զայդպիսի առաջարկ մերժեցից մինչ իսպառ ,
Զի զարձանս իբր ըզքեզ շահասէր անձն արար .
Թէ զայրոյթ Անեղին ի վերուստ շարժեսցի ,
Քանդակեալդ ուրուական դիտապաստ տապալի :

Զարեն

Լուս լեր , ապիրատ . տեղասցի ի քեզ
Նորա բարկութեանըն ցասումն հրակէզ .
Հայհոյութիւն է այդ , չըզանգիտես :

Գրիգոր

Բարձ ի միջոյ , Հաստիչ գոյից , ըզսեղանս այս Անահտայ ,
Յորում զոհէ ըզզըւարակս ազգ Արամայ վայրապար .
Հար և փըշրեա , Ամենակալ , ըզթընամիդ անխընայ .
Ժամանեսցէ ըսպառնալեզք սըրտմըտութեան քոյին կար :
Անկիր տապաստ ի տեղւոնչէդ ձոյլ ձեռակերտ դիւական ,
Անկիր յերկիր և շուք անուանդ մի յաւիտեան յիշեսցի :
Այ հէք թըշուառ , փոխանակ զի պաշտօն առեր յարգութեան ,
Քեզ ասեմ , օ՛ն , անկեալ արձանդ յանդամ յանդամ յօշեսցի :
(Կուռք անկեալ փշրին) :

Զարեն (Տանելով գրիգոր առ Արքայ) :

Վայ քեզ , անըզգամ , ցերք ընդ աստուածոց յարդարես կըոխւ .
Արդարեւ քեզ արդ կան մընան չարեաց նոյն աղէտք անթիւ .

Ասստ յիմարութեանդ ուր առեալ հասոյց ըզբեղ . զինչ ամօթ
քեզէն ինքնահնար յերազեալ պաշտես զաստուած անծանօթ ,
Բայց ընդ վընասուդ մատիր յառաջնա այժմ ի դատաստան .
Տուր պատասխանի , ըզբէն առ Ալքայ լինիմ ամբաստան :
Ալքայդ մեծազօր առ իմէ ցարդ ևս տանել հեղութեամբ .
Եերկիր կործանեաց զինքեան արարիչ յամառն ապրատամբ :

ՏԵՍԱՐԱՆ 2.

ՏՐԻԱՏ , ԳՐԻԳՈՐ , ԶԱՐԵՀ , ՇԱԽԱՐԵ

ՏՐԴԱՄ

Եւ զինչ լըսեմ . . .

Բաւ ապիկար անսաստութիւնը ցայդ վայր .

Ոլոտընդոստ ուր կայծ ակունք , զիք արշար ,

Դըմոխանւոյն , ուր նեստք սրածե և հրաբոց .

Հապա տարայք վըտարանդիս ի հընոց :

Եեր Գրիգորէ առաջարկին դիւրընկալ .

Ապ' եթէ ոչ յանդամ յանդամ յօշոտեալ

Կեր շանց թըռչնոց , և բաժակաք դառնութեան

Ապականեմ ըզբոյդ չըքնաղ կերպարան :

ԳՐԻԳՈՐ

Մի է Աստուած երկնի ւերկրի Արարիչ ,

Որ զօրութեամբ անվանելի իւր բաղկի՝

Ըզբէսն յերկնէ խորասուզեալ ի հրալիճ

Ըզսէդ թելիարն , արար յաւերժ վոտարանդի :

Նա մարդասէր խընամարկէ զկենդանիս .

Զանուն նորին պատմեն արարքն օր յաւուր .

Մըշտապաշտօն քըննէ ըզսիրտ աշխարհիս .

Միայն հաճի ընդ սիրտ խոնարհ և անդոյր :

Ատերիք են նըմա կըռոց ըսպասեակք ,

Ոլք հարեալ յիղձ բարձի պատույ արքունի ,

Փոխանակեն զիւր անուն ընդ փայտ անարդ ,

Անշէջ հըրոյն զոզիս որսան ի լուցկի :

Ըզնա միայն պաշտել ձօնիւ յարգանաց

Պատուէրս եղին կըտակարանք մըշտակաց :

Տրդատ

Ո՞վ հիբութեանդ . այ յետսամիտ գու զաշացու .
 Զի ողորմիք սըմա , աստուածք , մինչ ոչ պակնու .
 Ո՞քան ըզձեղ հըզօր կացցէ ամենակալ .
 Զիք ոք ուրեք , չիք ոք նըման ցարդ երկեալ .
 Եւ ո աստուածն զոր տէր կոչես արարշութեան .
 Իջցէ յարէս մեր ահեղիցն աստ յանդիման .
 Յիշատակն այլ , օ՞ն , կորիցէ քոյոյ զարմի .
 Զի ո ժուժէ գալ մենամարտ ընդ վահագնի :

Զարեն

Ահա լինիմ անիծաղիր յարև կենաց .
 Արագ հասցէ հայհոյութեան քո փոխաղարձ .
 Քաւեալ եմք մեք յուրացմանց .
 Նըզով առն որ զայն երկնեաց :

Շաշարշ (Գալով) :

Ըսթափեսջիր , սիրելի ,
 Լընուլ զհրաման արքունի :

Գրիգոր

Անշարժ կացից ի յոյս իմ ,
 Թէ և ցըմահ տանջիցիմ :

Տրդատ

Առէք ըզսա վայրագասուն ուրուականաց զըսպասեակ ,
 Զարախտավար աղէ տարայք զիք տանջանաց նըշաւակ .
 Ի կոշկոճանս թոպեալ գանից տըւայտեսցի անդարման ,
 Դենք և կըտտանք շատ կուտեսցին ի գլուխ նորա վիսական .
 Իսկ զի շամբուշ նախ հայհոյեաց ըզզիս անահ ի զոհի ,
 Գայլ ի բերան արկէք նըմա . թէ ոչ այդու խրատեսցի ,
 Յողին բարձցէ ըզշառաշեղ հատած զաղին վիմարդեան .
 Գելոց կըրծից , գելարանաց անձին տաջիք պատժական :
 Ի կապ անդուլ առասանաց բարձրացուցէք կախաղան ,
 Ուստի անմահք վայր հոսեսցեն արագ ըզնա անպիտան .
 Եթէ այպքան չէ բաւական՝ ըստորագլուխ կախեսցի ,
 Բըռնամարտիկ յաշաց դահճին սարուափ առնուլ ի հոգի .

Անդ գարշահոտ ծըմով աղբից սատակեսցի շրնչասպառ ,

Ովյ ըզթիկունս ըըրաց հարուածք խորտակեսցեն չարաշար ,

Կոճեղք փայտից յարմարաւոր առցեն զխոտուցըս նորա ,

Պընդեալ ուժգին հասա առատկօք ելցէ արիւն բոսորայ :

Ի զարտուղի ներբանս ոտից վարսեալ բեւեռս երկաթի՝

Աստանդական լիցի թափառ համանըման նիսարի :

Արկէք յորսայս ըզլըրբենին , դիք ըզգըրլուխն ի մամուլս .

Աղ , բարկ քացախ , փող յեղեղան բորակ հանէք յըռընգունս :

Յօդենեաց պարք մոխրանոցի ընկճեալ զաման ըզիսելաց՝
Այնուհետև բաժին լիցի օրհասակին թըխամած : (Շաշարշ տանի զգրիգոր) :

Գրիգոր

Յօժար տարայց ամենայնի : (Երբայ զայս ասելով) :

Զարեհ

Յիմարութիւն անտանելի :

Տրդատ

Այս անմիտ խըստասիրս զինչ երկնեաց ի մըտի .

Ի խընդիր իւր մահու տառապի զըրաջան .

Եւ զի բանք իմ չեղեն ինչ նըմա լըսելի ,

Գատուհաս լիցի մասն իւր բաժին կորըստեան :

Ըզգրէժ ես իսկ հանից աստուածոցն այպանաց ,

Զի ասաց ըլնոսա փայտ , ոսկի , և արծաթ .

Ոչ , անմահք են նոքա , գերագոյն տէր փառաց ,

Գործ հիւսան չեն համբուն կամ ձուլած գեղազարդ :

Զարեհ

Մօտալուտ օրհաս մահուան

Ըզմարմնով շուրջ պատեսցի .

Կորիցէ թըշուառականն

Որ ըզկեանս իւր ոչ կամի :

Տրդատ

Օն առեալ միւսանգամ եկեսցէ աստ Գրիգոր ,

Ըզփուրսիչն ողջամիտ քըննեսցուք աստանօր :

(Զօրականք երկու բերեն զգրիգոր) :

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՏՐԻԱՏ. ԳՐԻԳՈՐ. ԶԱՐԵՀ

Տրդառ

Յոյժ Ժըտեցար , յոյժ , Գրիգորէ . և ես վիրացդ ի գարման
 Յողոք անկայց արդ Անահտայ՝ ինայել ի քեզ յաւիտեան :
 Քեզ զի՞ այդպէս . ոհ , մոլեցար գէմ մեր կըքրեալ անվախճան .
 Անսաւ անսաւ , մի հեղանար ըզդիս պաշտել սըրբազնեան :
 Իբրև զայր մի անաշխարհիկ եկիր ի մեզ յարեցար ,
 Անկեղծ սըրտիւ ծառայեցեր մեր արքունեաց ընդ երկար ,
 Եւ ես յաւէտ գոհանայի ըզվաստակոց քոց ճարտար
 Երկնեալ ի սիրտ ոսկի բազում յօժար յանձնել ի վըճար :
 Զիարդ , բարէ , պաշտես զօտար , զոր ոչ ունիմք ի տաճար ,
 Հայրենատուր և ոչ օրէնք մեզ ազդեցին անվըթար :

Գրիգոր

Թէ Քրիստոն է Աստուած արարիչ համայնից՝
 Զայն նորուն առաքեալք պատմեցին աշխարհի ,
 Թէպէտ և տանջեցան հալածեալք գանալից ,
 Են ողջոյն մարդկութեան բարերարք հաւաստի :
 Զայնէին ընդհանուր , Մի է Ցէր մեր Աստուած .
 Ել գոչին բարբառոյն ընդ չորս ծագս յանդիման ,
 Վեր ի վայր սարսեցաւ անդ աշխարհ ի հիմանց ,
 Ազգք ազինք ընկալան զաւետիս փըրկութեան :
 Հայաստան իսկ յայնժամ աւետեաց ի խընդիր ,
 Ընկալաւ ի զիրկ իւր ըզկրօնս այս գերաբուն .
 Եջ Աբգար ի գահէն թաղէի ունկընդիր ,
 Մըկըրտեալ ի ջուր սուրբ՝ երկիր պագ խաչելոյն :
 Քարոզէր անդ խորհուրդն երեցունց սուրբ Անձանց .
 Հայր , Որդի , ինքնազոյ և Հոգին ընդ նոսա .
 Անըսկիզբն յէութեան ի գահոյս հրաշապանծ ,
 Երեքեանն են մի Ցէր՝ մի Աստուած գերակայ :
 Ի սոցունց լոկ Որդին մարդկացաւ կուսածին ,
 Առ փըրկել զազդ մարդկան ի ծանր իւր յանցուածոյն .
 Ել ի խաչ բարձրացաւ նըշաւակ յառակին
 Ուսուցեալ և ըզմեզ ժոյժ ունել հաստատուն :
 Հաւաստակ թէ Մեսիայն տայ հանդիստ արդարոց
 Որք կըրեն յիւր անուն ըզտանջանս առ վայր մի .

ինքն ասաց հեղարան, օ՞ն, առ իս վըշտահոծք,
Զի լուծ իմ քաղցրիկ է և բեռն իմ փոքրոգի :
Ես ձեր կեանք ճշշմարիտ, մըսիթար բերկրալի,
Ճանապարհ երկնային առաջնորդ Ադինայն,
Մի լինիք անլասող իմ անխախտ հրամանի .
Յիշեցէք զաջ հըզօր Բարձրելոյս քինահան :

Տրդատ

Երթիցէ ի կորուստ այդ Մեսիայ վատանուն
Որ զեթեր և ըզծով ոչ արար զարդարուն .
Հիմ հիւսան դու զորդի դաւանիս արարիչ,
Որ ի խաչ հեղուսեալ օրինաց խանգարիչ :
Ազգին բոյս է չըէից ատելիք չայկազանց .
Զիք կորով ի նոսա և կոչին վատարանց :
Այլ մեղայ . մի աստէն ես նորայն զօրութեամբ
Փեռեկեալ զլորիցիմ ի դըժոխս անխունապ :

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԶԱՐԵԼ. ԳՐԻԳՈՐ. ՏՐԻՒՏ

Զարելն

Իբրու զի՞ բարի
Դիք մեր հայրենի .
Լստեղծողք օրհնեալ
Համայն աշխարհի :
Նոր կեանք շինութիւն
Գրոհին Հայկազուն ,
Լստեղծողք օրհնեալ
Բաշխեն զօդնութիւն :

Գրիգոր

Ո՞ւր նորին անճառ
Զօրութիւն և կար .
Լստեղծուած ձուլեալ
Լստ հաճոյս հակար :
Փըշրեցաւ անդրէն
Ցերկնաւոր Ցեառնէն .
Լստեղծուած ձուլեալ
Հնարիւք մարդկեղէն :

Տրդատ

Զի վերըստին բանիւ անմարթ սատան յարեաւ հրամանիս ,
 Ըլրաժակն արդ արբցէ , կըրկին պատուհասին և զաղի .
 Ի փոկ տըկաց՝ յառջառաջիլ , պըրկեալ սաստիկ ի կախան ,
 Յորդահոսան ջուր ջերմաջուր լիք ձագարաւ յորովայն :
 Աղարտեսցէ զպառակ կողիցն հրաշէկ քերիչ չեփեստեայ ,
 Լայնակայլակ ի ճապաղիս թաթաւելով անխընայ .
 Ի ճեմելիս երկաթամուխ սուր տատասկաց թովբելին
 Մերկ կողոպուտ , լիցի յընթաց ըզփորձ առնուլ ըզվըշտին :
 Հիքացելոյն ծունկը ի կապիճս , ի մուխ ուռունս սոսկալի ,
 Կոտոր կոտոր բաժին լիցի հաւուց և շանց երամի :
 Երես շառնեմ սին բանից քոց , ես չերկընչիմ յԱստուծոյդ ,
 Պատուհասիկք ըզքեղ խախտեմ ի քոյ յուսոյ հետամուտ :
 Արդ ըստ բանի անդարձ վըճույս ըզկեղտ մարմինդ այրեացեն ,
 Կապար ջերմին հոսեալ պուտամբ յեռանդան անդ հալոցէն :

Գրիգոր

Յանձն առից կամովին ըզվընհուն անիրաւ ,
 Յօրինսակ Յիսուսին որ ընդ իմ խաշեցաւ .
 Զի արագ անցանեն նեղութիւնք աշխարհի ,
 Հուսկ որբեմն հասանել ի խրախնան տէրունի .
 Ասաց իսկ Տէրըն մեր , մի պակնուք ի բաղկէ ,
 Ի բազկէ որ միայն ըզմարմինն յօշոտէ .
 Ես եղէց քոյին փառք , յիս յուսա անտրբում ,
 Ես ըզքոյդ խորտակեմ թընամիս զապառում .
 (Հանեն զԳրիգոր արտաքս)՝

Տրդատ

Ո՛վ ցասումն ահագին ,
 Շըշմնես տակաւին .
 Ահա սուսեր փայլատակեալ երկսայրի ,
 Անցադ ճարպոյն ծարաւի .
 Բոցոյն բորբոք զարիւնդ արբցէ քո մոլի
 Վըճույդ լիջիր ուշաղիր .
 Ապ' եթէ ոչ տապալ ըզքեղ ի յերկիր
 Կործանեցից անցարիր ,
 Ժանտ երկաթոյն ճարակ եղեալ և մեռիր .

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՕՏԱՅ. ԶԱՐԵՀ. ՏՐԴԱՏ. ՏԱՃԱՏ

Օտայ (Հասեալ ընդ Տաճատայ) :

Խնայեա, արքայ, վեհանձնութեամբ հայրենի,
Մի վայրապար հատցես զարև Գրիգորի.
Շատ են տանջանքըն՝ զոր կըբեաց ի մարմնի.
Եիշեա զվաստակ և զաշխատանս բիւրազգի:

ՏՐԴԱՏ

Հիանամ զի համակ նա մարմնով կարեվէր՝
Ողջանդամ զօդ շընչէ ։ պըղընձի է պատկեր .
Ոչ նըմա բանք աղու՝ ոչ տանջանք բազմազան
Ոչ աղդեն, ոչ ժանիք, ոչ և ձոզ, կախազան .
Ոչ մամուլ, ոչ տատասկ, և բազուկք թուլացան .
Ըզյամառն հնազանդել յանացաք ընդունայն .
Մի գուցէ դիւթական պահպանեալ զօրութեամբ,
Եւ ըզմեզ շրբիւսցէ ի նոյն միտս ապրատամբ :

Տաճատ

Ադամանդեայ սըրբաց ամրին ի բարձանց՝
Որ երկնայնյ ողջոյն դասուն է կայան,
Դիտեալ ըզփառո բնակաւորաց գերապանձ՝
Ընդ ձեզ, այս, ուխտիք անդարձ հաճեցան,
Որոց յաւերժ սատար կացեր պերճութեան
Զի ըզյետնեալս բըռնի ածեր ի հաւան .
Ըզդրիգոր իսկ տանջեալ պատժոց դատապարտ,
Ի նա բընաւ ոչ զընդացեր առ զըթոյն,
Որ անգուսնեաց ըզմեր աստուած տարապարտ,
Պատրեալ խարմամբ յօտարոտի ինչ անուն :
Արդարադատ յամենայնի վարեցար,
Զի զեղծաւ նա ըստ չափ անցեալ չարաշար :
Եւ այժմ եթէ ի քո գահէն պերճանաց՝
Տացի հրաման նըւաստախոհ ծառայի
Ի խորհըրդեան և ի ծերոց գումարած
Համարձակիմ ըզբանս յայտնել ցարդ գաղտնի :

Տրդատ

Ո՞ն, աստէն բացերև
Յայտնեա զոր ինչ եղեւ
Ծերունեաց ի հանդէս
Հրաման է յալքայէս :

Տաձատ

Զանպարագիր շըրջան վարուց անըզգամին
Որ յանցաւոր է քրէական ի քաղաքին,
ՅԱՐՄԱՆԱՊԴԱՅ ճըշդըրտեցի աւուրբ յառաջ,
Թէ զթագ կորզել, խոռվեալ հանել ըլխառնաղանն,
ԼԵՐՄԵՆ Պարսից ծըպտեալ որդի չարն Անակայ,
Վլնասապարտ հօր քում կենաց, երկինք վըկայ.
Պըշնուն միտք իմ՝ շըւարելով թէ զի՞ այդքան
Նըման ծնողին գործէ ոճիրս աներկեան : (Երբայ Օտայ) :

Տրդատ

Առ իս եկեսցէ իշխան Արտաւազգ,
Ըզմասա Գրիգորին արասցէ մեզ ազդ : (Գայ Արտաւազդ) :

ՏԵՍԱՐԱԿՆ Ժ.

ԱՐՏԱՒԱԶԴԻ, ՏՐԴԱՏ, ԶԱՐԵՀ, ՏԱԶԱՏ

Արտաւազդ

Ողջին քեզ, Ազքայ, պարծանք մեր ազգի,
Խընծղանք են սըրտի հրամանք քո բարի .
Բարձրագահ եղեալ՝ ողջ լեր յաւիտեան,
Ըզքեզ պաշտեսցուք քնարիւ քաղցրութեան :

Տրդատ

Բարեաւ քո գալուստ, սալար արքունի,
Անցեալ բազմեսջիր ի դատաստանի,
Յամառ Գրիգորին զեղեռն և զոնիր
Ի լուր ատենիս կարգաւ պատմեսջիր :

Արտաշազդ

Արքայ , ի քո վեհութենէդ ընկալեալ զայդ պատուիրան ,
Քո առաջի և ծերունեաց բանալ ստիպիմ զիմ բերան .
Առ այս մըղէ , ոչ կիրք անձինս , ոչ ընդարցս քէն վրիժու ,
Այլ իրաւանց սէր ցանկալի՝ զոր ի մեզ պար Դից հեղու :
Զայդ պաշտօնեայ չարեացապարտ զոր գըդուեցեր մինչև ցարդ ,
ի Փարսկաստան ծընաւ Անակ՝ անըզգամն այն մեղապարտ .
Թէ և անկաւ ընտանեօք ընդ դատակընքաւ խոսրովու ,
Այլ ըզդրիգոր ի կեսարիա փախոյց նորին ըստընտու .
Անդ ընկալաւ զիւրն անարգեալ զաղանդըն նոր Քրիստոսեան
Որ հալածի ամենուրեք չունի ուստեք ապաստան :

Տրդատ

Անթիւ իսկ են չարիքն անշափ պարտաւորի գըյխատման .
Նա մանաւանդ հայրըն դըտաւ հօրըս կենաց գաւաճան .
Այ ապառում , բանք իմ եթէ բոհմունք և սասպք բընաւին
Անշիշաշար մըտաց կընիք ի նա երբեք չազդեցին ,
Ահա զերդումըն սոսկալի յաթոռըս Դից ես երդնում .
Այո , այնպէս , զա մի տեսցէ զըլոյս կենաց անպատում ,
Զի գոն նըմա բացուատ ի բաց զէն առ սուսեր կարկառեալ ,
Խոցք և կեղանք , մահ տեսական մըշտաշարչար բալ ի բալ .
Բայց ասացէք մեզ , Նախարարք իրաւագէտք պետութեան ,
Որո՞վ մահուամք բառնալ ըզըունչ ըստահակին դաւաճան :

Արտաշազդ

Առ չարեաց հատուցումն մի արագ ըսպանցի .
Յանմոռաց խրատ այլոց կայցէ զա յարամիի ,
Ցիշատակ պիղծ վարոցն և բարուց յիշեացի ,
ի վիրապն արկեալ խոր Արտաշատ քաղաքի :

Զարեն

Ըզվրէժ լուծցէ անդ զարժանին
Զի է զաւակ անօրինին . . .
Օ՞ն և օ՞ն ի զըուին
Բաժակ թոյրաթուին :

Տաձառ

Անդ օձք կարիճք հիւրասէր ,
Ողջամբ դըմա տան հրաւէր : (Մուհաննեն ի ներքս գԳրիգոր) :

ՏՐԴԱՄ

Քանզի չէ արժան քեզ վայելել զայս կենցաղ,
 Զի անունդ և պատիւ փըքացեալ չըքացաւ,
 Երթ հապա ցընծալից ի Վիրապն անյապաղ,
 ի հանգիստ գաղանաց զԱրտաշատ քաղաքաւ:
 Անդ նոցա քարոզեալ ըզՔրիստոս խաշելեալ
 Խւր վարուք սըրբափայլ և արեամբ պատուական,
 Ըզնոսա գեհենեան ի լրծոյն ազատեալ
 Առ հանգիստ պարզեալ զիւր փառաց օթարան:
 Գիտացեն գերախտիս քան ըզմեզ ի վերոյ,
 Խըստակրօն կենակցել և ի քեզ մի ջնասել.
 Կանգնեսցեն ըզեղանս յոսկւոյ և արծաթոյ
 Հաշտ լինել ընդ իւրեանց Աստուծոյն անընտել:
 Արպէս զի և Քրիստոս հայեցեալ ի բարձանց՝
 Այլ ըզքեզ հանգուացէ ի վըշտացդ անհամար՝
 Զոր ի ծոցդ ընկալար տուգանօք մըթերաց
 Ըղձացեալ ի բարձունս ճոխանալ վեհաբար:
 Օ՞ն, զի՞ յապաղես,
 Առիթ շընորհաց
 Գըթած յԱրքայէս
 Պարզեի անանց:
 Զօրականք, շըղթայիւք կապեցէք
 Ժանտածին զայս կախարդ տիրանենդ.
 Կարճեսցին մաքառ.մունք . . . (կապեն զձեռս և զուռս):

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ԳՐԻԳՈՐ. ԶԱՐԵՀ. ՏԱՅԱՏ. ԱՐՏԱՒՐՁԴ:

Գրիգոր (մեկուսի):

Գոհանամ ըզքէն, Տէր, զի և զիս զուգափառ
 Արժանի արարեր պարզեաց քոց անճառ,
 Կըթացեալ բընութեանս շընորհօք յորդառատ
 Թէպէտ և յանցուցեալ ի զրախտին ծաղկազարդ,
 Իցիւ թէ հրամանիդ նա անսայր տէրունի,
 Շնորհէիր անվիշտ կեանս յեղեմեան պարտիզի.
 Այլ այժմիկ կամիս, Տէր, մեր քըրտամբ անթարթափ
 Յաղթելով ժառանգել զարքունիս հոյակապ:

Ուր յաւէրժք են բրաբիոնք և պըսակք մըրցողաց՝
 Որք աշխոյժք ետուն ընդ թելիարայ գուզարած։
 Քոյդ ուրեմն եղիցին կամք բարիք ամենայն,
 Քոյդ ի սէր համբուրեմ զայս շըղթայ փըրկական։
 Աստ կիզեա, աստ տանջեա, մի անդէն մեղապարտ,
 Յիս յայնժամ գըթա, Տէր, որ լըլկիմն տարաբաղդ։
 Ընդ քեզ ես համբերեմ գառնութեան տանջանաց,
 Որպէս դու ի փայտին համբերեր կախեալ մած։
 Մի դու, Տէր, մի դոցա ի յանցանս համարիր,
 Զըդիտեն զինչ գործեն, յինչ մոլին ախտակիր։
 Ողորմեա այդ հոգւոց որոց քոյդ պաշտօնեայք
 Ընթացան ի քարոզ աւետեօք երկնառաք։
 Ուրանօր և հեղաւ շատ արիւն սըրոց քոց։
 Դարձ տուր, Տէր, միւսանդամ զիւակիր ի կըռոց։
 Որպէս զի ծանիցեն զքեզ միայն Արարիչ
 Որ զազինս ընդ երկնիւք փըրկեցեր խաշանիշ։
 Օրհնելով օրհնեսցի անուն քո գերագոյն,
 Ծանիցեն ըզքեզ, Տէր, Հայկազունք ինձ հանգոյն։
 Սիրով քով բորբոքիմ մոռացեալ ըզմարբառ,
 Զայս եղեալ խոստովան մեռանիմ շընչասպառ։
 Ե՛նըման վիրապն այն մըսրոյ տան Եփրաթայ,
 Զի անդուստ աւետի փըրկութիւն Արամայ։
 Դուք, ով քաջք, ճըգնեսջիք գրել ձեզ փառս արքենի
 Մի միայն կալ երկնից նահատակ պանծալի։
 Վիհըդ մեծ արգասեօք բաց ըզփակ քոյդ դրանդեաց,
 Զի մըտից սըրացեալ ընդ յարկաւ խընդաղդեաց։
 Աւանիկ կատարին ողջոյն կամք վերնական։
 Ակն ունիմ ի մօտոյ զի դարձցի Հայաստան
 ի հըռչակ աւետեաց
 Հայշալեօք յօրինուած
 ի սուրբ կրօն Քրիստոսի։
 Վըկայեաց յիս չոդի։

Զարեն

Ա՞վ յամառկոտ, չեղե ի քեզ ապաշաւ,
 Ըզդառնութիւն մեղաց ըմպել. երթ բարեաւ։

Տաձատ

Մատնեսցի խըստամբակն
 ի վախճան ձախողակ։

Արտաւագդ

Ո՞վ խորհըրդոյ յիմարելցյդ կմեղաթիւր .
Ժանտ երկաթոյն զիարդ սիրոյ տաս համբոյր .
Մերկ և թափուր ըսպասաւոր արքունի ,
Ռուր այդ յուսով զիմեալ երթաս սընոտի :

Տրդատ

Այ յետսամիտ , գաւաճանին Անակայ
Համանըման ծընունդ ժանտ և խարեբայ .
Ի՞րը անհըլու անհուն չարեացդ ի խոհեր
Ակն ինձ չածեր՝ կամացս ընդդէմ խաղացեր :
Կարծեցեր թէ չիցէ սուրն իմ վրիժառու .
Այ խելագար , քեզէն եղեր մատընտու .
Ի քէն այժմիկ ես խընդըբեցից մեծապէս
Զընդ վայր հեղեալ զարմիս զարիւն վըրվիրագէզ :
Վըրէժ , հապա , յիշատակաց անիծից ,
Վըրէժ հօր քո խարէութեան նենդակից ,
Վըրէժ հայրենեաց , արքայական վրէժ թագի
Եւ հօրն իմոյ անպարտ արեան ծորանի :
Որ յիւր մահուն յանմահութեան յորորան
Սևաթորմին խաւար առթեաց մըթութեան .
Անդ էաք մեք , բարձունք Մասեաց վեհավայր ,
Ընկապ անձկաւ ի սուգ դըմբաղդ հաւասար :
Ընդ ըշձանաց դոյզըն շահու անիրաւ ,
Ճըրագն Հայոց ի զուարթ լուսոյն անդ շիջաւ .
Այն ինչ Անակ մարդախոշոշ իրը ըդգայլ
Զագահութիւն և զմատնութիւն՝ դ իւր բարձեալ ,
Սուտ փախըստեայ էր ի Խաղիսաղ ապաստան ,
Ըզթագն Հայոց վաճառելով յանպիտանս .
Արդար են Դիկ՝ որ ինձ զիրաւն յայտնեցին ,
Ոչ կամեցան ըզփաւս որդւոյ դաւոզին :
Դուռ ապաշնորհ , հիմ մոռացօնք քեզ եղեն
Պարզեք ձօնի , պըսակը և շուք որ յինէն ,
Շուք ի խրախճանաս , շուք ի հանդէս աւագաց ,
Շուք ի պաշտօն արքայութեանս խընդաղգեաց :
Զի դու ումպէտ զայս ամենայն զըրեցեր
Ցոյժ սըրտացեալ մոլար կարծեաց քոյ ի սէր ,
Ցետըս գարձար ապախտ ըզդիսն արարեր ,
Ոչ երկուցեալ յաչաց նոցին շանթաբեր :

Օ՞ն , արդ շըզթայդ հանդերձից քոց լիցի զարդ ,
 Նովաւ փայլէ այր խըստամբակ ի թակարդ .
 Տուն ճիւաղաց խաւարչըտին ճեմարան
 Արքայութիւն քո ի յերկրի անվախճան :
 Զոր ուխտեաց քեզ կարծեցեալն այն քո Աստուած
 Փոխան այնքան վաստակոց քոց և քըրտանց
 Փառք քեզ վիրապն , և բարձից քոց այն աւարտ ,
 Յաւէտ ձանձիր ըստորերկրեայց ընդ գումարտ :
 Արագ անտի ի ծով հրալիր գեհենի
 Խարդաւանեալ անկցիս կործան եղկելի :
 Օ՞ն , շուտափոյթ ի մըթութեան խորխորատ
 Արէք տանել , զօրականք , զայս մահապարտ :

Գրիգոր

Յառաջ , օ՞ն , զօրականք ,
 Չեմ վըճոյն դըժկամակ .
 Տարայք զիս ի վիրապ ,
 Տարայք , օ՞ն , հապըշտապ : (Տանին զԳրիգոր արտաքս) :

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՍՄԻՍՏ . ՏՐԴԱՏ . ԶԱՐԵՀ . ԶՈՐԱԿԱՆՔ

Մմրատ (Գալով) :

Բատ հրամանաց վեհափառիդ՝ ժամ է խաղալ յաջողակ
 Առ առաւել բարդաւաճանս աշխարհակալ մեր զօրու .
 Ի նոյն իսկ տենչ բորբոքեալ կան ախոյենից գումարտակ ,
 Զինու զարդու սպառազինեալ են ամրակուռ կազմ ի չու :
 Հիւսիսային ազգ խուժադուժ ի մեր երկիր գըռոհ տան .
 Իսկ կուսակաք , գաւառապետք մեկնին յիւրեանց քաղաքաց
 Թողեաք զամուրս աղխիւք ընչիւք աւարառուաց ապաստան
 Տասըն բիւրիւք արշաւեսցուք կըշուել նոցա ըզհարուած :

Տրդատ

Ա՛վ բարկութեանս . զիարդ ժըպիրհքն այնոքիկ
 Խիզախ յառնեն հանդերձանք խարուսիկ .
 Դեռ ևս չիցեն փորձ քաջութեան մեր բավկին
 Զի մահաշունչ ճակատամարտ յաւակնին :

Քանիցս ոսոխք ի Պարսկաստան չարաբաստ
Անկան գլեցան յասպարիզի դիտապաստ ,
Եւ ի խօշիւն մահու յուզման մարդախանձ
Նահատակաց դաւք վանեցան հետընթաց :
Բազրատունիդ , մատիր յառաջ զօրութեամբ
Ցանել ցըրուել ըզմըշնամին ապրստամբ ,
Անանային հողմոց նըման տարուքեր
Սըփուել ըզգիակս յերեսս դաշտաց զայս գիշեր :

Սմբատ

Ըզմինդն ունայն ի փորս իւրեանց թաղեսցեն
Ակընկալեաք յածող ելից ապաւէն
Ըզմեղ մեռեալ կարծեն նոքա ապազէն : (Գան զօրականք) :

Զարեն

Արիք ի մարտ , և կորովիք .
Ի մեծարանս ճակատագրի
Զեղ ի յերկնից են զօրավիզն
Պատենազէն գունդք Արիսի :
Ի գագաթունըս թըշնամեաց
Նետք տեղասցին ցայտուկ ցայտուկ .
Զարդար վըրէժ մեր հետընթաց
Հանեցէք արդ , քաջաց բըռունք :

Սմբատ

Արձանասցուք միահամուռ 'դ Արագածին ճանապարհ ,
Անկցուք չարդել մեք ի վերայ ողջ բանակին չարաչար .
Զարիութիւն հայ դիւցազանց ունիցիք ձեր առաջի .
Փախըստական ոք ի մարտէ յօրահասէն մի զերծցի :
Որ ի բազում բաղդի մըրցմունս ընկալայք դուք ըզնըշան ,
Զընդդիմակացս յասպարիզի սատակեցէք զամենայն .
Մերում զարմի ըընիկք են յաղթք , որպէս յիշեն պատմաբանք .
Արշաւեցուք , Հայոց կորինք , սովալըլուկ ի հրոսակ :
Մի տարակոյս յաշողութեան ի ձեղ բազդի յայս նըւագ .
Երդնում ի դիս , յարև թագին Հայկայ , օ՞ն , մեղ մընան փառք :
Հապա , քաջք իմ , կամ մեք կեցցուք , զի այս վայել է համակ ,
կամ ի մարտի եթէ անկցուք՝ համարեացուք նահատակ :
Ընդ հովանեաւ քաջ վահագնի սատակեսցին ըստամբակք
Եւ յաքունուստ առատաձիր ընկալիք դուք մըրցանակ :

Հընչեսցի փոյթ աւագափող՝ տացի նըշան մարտացու ,
Յառաջեցեն զրօշակաւորք կարապետել յարեան չու :
Հապա , յառաջ...

Զօրականք (Երգեկն ի քայլ) :

Ի կոիւ մահաշունչ արիք , Հայկազունք ,
Ծեծել սուսերաւ Սասանայ ըզկրունկն ,
Անհաշտ մեր թըշնամեզն .
Ոյր զօրք ահիւ տացեն փախուստ ,
Ընդ ճեպ քաջացն կասեալ յետուստ ,
Անկցին դիտապաստ , յարեան թաղթաղուն :
Ի զէն ամրապինդ ելցուք ի ճակատ՝
Խաղալ ձիընթաց յամբոիլ ապիրատ
Կործաննել յանդիման .
Չօնի առատ մեզ ի բարձանց
Աղիկամի աստ քաջարանց
Դիմելոց ի մահ , պըսակ յաղթական : (Չգի վարագոյրն) :

Կը շարունակուի :

Ա.Ր Տ Ա.Շ Ե Ս

ԱՐԱԲՈՒԱԾ Գ.

ՏԵՍԻԼ Ա.
Սւնեակ փառաւոր .

Արտաշէս , Արտաւան

ԱՐՏԱՇԵՍ

(Մոտեալ ընդ Այստաւանայ) : Ահաւասիկ ես , իմ
քաջազուն Այստաւան , հայրենին վիճակնալ
գահու՝ սկիզբն առնեմ գործոց արքունի .
այլ զիմորդ դառնութեամբ լցաւ պղտորե-
ցաւ մեզ օրս , ոչ զիտեմ , և անփորձ ճե-
ռամբ յայսոսիկ մինիլ զանգիտեմ : Այլ դու ,
երեելիդ՝ ի դրանս արքունի և հաւատա-
րիմ յիր և ՚ի բան , քաջութեամբ և ի-

մաստութեամբ ճեռն առւր ինձ , գոյնարէն
երախտեաց հօր իմոյ :

ԱՐՏԱՇԵՍ

Դառայ քո եմ , տէր արքայ . ահա ես ճգեմ
զձեռն իմ առ քեզ , և ոչ վրիզեսցի բան մի
յարքայէ :

ԱՐՏԱՇԵՍ

Երթ դու այժմ ՚ի բանտ առ Արքակ , և
տես զի՞նչ բանիք են ՚ի բերան նորա . և
փութա այսր և խորհեսցուք ՚ի վերայ նո-
րա իրաւունս :

ԱՐՏԱՇԵՍ

Ահաւասիկ ես : (Վա՛ անմտութեանդ) :
(Ելամէ) :